# ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ – 2017
# ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ, 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ
# Տևողությունը 2,5 ժամ

## I. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (15 **միավոր**)

### 1) <<**ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**>> (9 **միավոր**)

*ա. Նշել ճիշտ պատասխանը:* *(0,5 X 6 = 3* ***միավոր****)*

1. **Ե՞րբ է սկսել կառավարել Սարդուրի** II **արքան**:
ա) Ք. ա. 810 թ. բ) Ք. ա. 786 թ. գ) Ք. ա. 764 թ. դ) Ք. ա. 685 թ.

2. **Արտաշես** I**-ին հաջորդեց իր որդին՝**
ա) Արտաշես II-ը բ) Արտավազդ I-ը գ) Տիգրան I-ը դ) Տիգրան II-ը

3. **Հայոց ո՞ր արքայի օրոք Վարդգեսավան գյուղաքաղաքը պարսպապատվեց և վերածվեց պետության մայրաքաղաքի՝**
ա) Տրդատ I բ) Սանատրուկ գ) Վաղարշ I դ) Վաղարշ II

4. **Գագիկ** II **Բագրատունին գահ բարձրացավ՝**
ա) 1022 թ. բ) 1040 թ. գ) 1041 թ. դ) 1042 թ.

5. **Պարսկաստանի ո՞ր քաղաքում է ծնվել Հովսեփ Էմինը**.
ա) Սպահան բ) Թեհրան գ) Համադան դ) Նոր Ջուղա

6. **Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեն ե՞րբ մուտք գործեց Քարվանսարա (Իջևան) և հայտարարեց Հայաստանի խորհրդայնացման մասին**.
ա) 1920 թ. նոյեմբերի 29 բ) 1920 թ. դեկտեմբերի 1
գ) 1920 թ. նոյեմբերի 30 դ) 1920 թ. դեկտեմբերի 2

*բ. Լրացնել կամ գրել պատասխանները:* *(1 X 3 = 3* ***միավոր****)*

1. **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ**: *(1* ***միավոր****)*
ա) Խոսրովի անտառի հիմնումը
բ) Զենոն-Արտաշեսի գահակալությունը
գ) Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների սկիզբը
դ) Արտաշեսի և Զարեհի նշանակվելը Մեծ Հայքի ու Ծոփքի կառավարիչներ (ստրատեգոսներ)
ե) Խառանի ճակատամարտը, Կրասոսի սպանվելը

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | | | |

2. *«Արիացե՛ք, մի՛ երկնչեք, հետևեցե՛ք մեզ, եթե հասել է մեր վախճանը՝ քաջաբար մեռնենք, որովհետև մեզ համար ավելի լավ է արիությամբ պարիսպներից դուրս մեռնել, քան այստեղ՝ մեր աչքերի առաջ, տեսնել մեր ընտանիքների ու բարեկամների մահը»:*

*(0,5 X 2 = 1* ***միավոր****)*

**Ո՞ր ամրոցի պաշտպանության ժամանակ է հնչել այդ կոչը**:
**Ազատագրական պայքարի ո՞ր նշանավոր գործիչները դիմեցին հայ զինվորներին այդ կոչով**:

____________________________________________________________________

____________________________________________________________________

3. **Գիտության ճյուղերը համապատասխանեցնել գիտնականների անվան հետ**:

*(1* ***միավոր****)*

1) երկրաբանություն
2) քիմիա
3) լեզվաբանություն
4) պատմություն

ա) Լևոն Ռոտինյան
բ) Հովսեփ Օրբելի
գ) Արտեմ Ալիխանյան
դ) Հրաչյա Աճառյան
ե) Հովհաննես Կարապետյան

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | | |

**գ. Լրացնել կամ գրել պատասխանները**: (3 **միավոր**)

1. **Տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ**: **Ընտրել երկու պատասխան**:

*(0,5 X 2 = 1* ***միավոր****)*

ա) Արգիշտի I-ից հետո գահ բարձրացավ նրա որդի Արգիշտի II-ը (Ք. ա. 764-735թթ.), որի օրոք երկրի ռազմական ու տնտեսական վերելքը շարունակվեց:
բ) Ք. ա. 84 թ. հայկական զորքերն անարգել մտան Ասորիք, և Տիգրան Մեծն Անտիոքում բազմեց Սելևկյանների գահին:
գ) 226 թ. Արտաշիր Սասանյանը տապալում է պարթև Արշակունիների իշխանությունը, կործանում Պարթևական թագավորությունը և հիմնադրում Սասանյանների պարսից տերությունը:
դ) Խոսրով Կոտակին հաջորդում է նրա որդին՝ Արշակ II-ը:
ե) Թեոդորոս Ռշտունին 652 թ. պայմանագիր կնքեց արաբական խալիֆ Մուավիայի հետ:

| | |
|---|---|
| | |

2. **Համապատասխանեցնել աշխատությունների և հեղինակների անունները**

*(1* ***միավոր****)*

1) <<Տիեզերական պատմություն>>
2) <<Պատմություն Հայոց>>
3) <<Պատմություն նահանգին Սիսական>>
4) <<Տարեգիրք>>

ա) Սմբատ Գունդստաբլ
բ) Ստեփանոս Օրբելյան
գ) Ստեփանոս Տարոնեցի (Ասողիկ)
դ) Մատթեոս Ուռհայեցի
ե) Հովհաննես Դրասխանակերտցի

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | | |

3. **Տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ**: **Ընտրել երկու պատասխան**:

*(0,5 X 2 = 1 **միավոր**)*

ա) Հայոց ազգային խորհուրդը Հայաստանի կառավարության առաջին նախագահ (վարչապետ) ընտրեց Ալեքսանդր Խատիսյանին:

բ) 1918 թ. Բաթումում ստորագրված հայ-թուրքական պայմանագիրը ուժի մեջ մնաց մինչև 1920 թ. դեկտեմբերի 2-ը:
գ) 1919 թ. հունվարին հայ-վրացական համաձայնությամբ Լոռին հայտարարվեց <<չեզոք գոտի>>:
դ) 1919 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացումը հայ բոլշևիկների համար իշխանությունը գրավելու հնարավորություն ընձեռեց:
ե) 1920 թ. մայիսի 1-ին Ռազմահեղափոխական կոմիտեն Ալեքսանդրապոլում հայտարարեց իշխանությունն իր ձեռքը վերցնելու մասին:
զ) Հայաստանի ազգային-մշակութային կյանքում նշանակալի իրադարձություն էր պետական համալսարանի հիմնադրումը, որի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1920 թ. հունվարին:

| | |
|---|---|
| | |

2) <<**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**>> (6 **միավոր**)

***ա. Նշել ճիշտ պատասխանը**:* *(0,5 X 4 = 2 **միավոր**)*

1. **Ե՞րբ է կնքվել հույն-պարսկական հաշտության դաշնագիրը՝**
ա) Ք. ա. 490 թ. գ) Ք. ա. 480 թ.
բ) Ք. ա. 449 թ. դ) Ք. ա. 500 թ.

2. **Ո՞ւմ իշխանության օրոք ֆրանկական պետությունը հասավ իր հզորության գագաթնակետին**:
ա) Քլոդվիգ գ) Կարլոս Մեծ
բ) Պիպին Կարճահասակ դ) Կարլոս Մարտել

3. **Ե՞րբ է սկսվել խաչակրաց առաջին արշավանքը**
ա) 1095 թ. բ) 1099 թ.
գ) 1096 թ. դ) 1098 թ.

4. **Ե՞րբ Իրանում հաստատվեց Փահլավիների արքայատոհմի** (**դինաստիայի**) **իշխանությանը**:
ա) 1920 թ. բ) 1925 թ.
գ) 1921 թ. դ) 1927 թ.

***բ**. (0,5 X 4 = 2 **միավոր**)*

1. **Պատմական իրադարձությունները դասավորել ըստ դրանց ժամանակագրական հաջորդականության**: *(0,5 **միավոր**)*

ա) Կոստանդնուպոլսի գրավումը խաչակիրների կողմից
բ) Կիևի գրավումը Նովգորոդի իշխան Օլեգի կողմից
գ) Պուատիեի ճակատամարտը
դ) Վերդենյան դաշնագրի ստորագրումը

ե) Քրիստոնեության ընդունումը Հին Ռուսիայում

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | | | |

2. **Կատարել համապատասխանեցում**: *(0,5 **միավոր**)*

1) Օլեգ ա) Ֆրանկական պետության հիմնադրումը
2) Քլոդվիգ բ) Հին Ռուսիա պետության հիմնադրումը
3) Ալեքսանդր Մակեդոնացի գ) Մարաթոնի ճակատամարտը
4) Միլթիադես դ) Գավգամելայի ճակատամարտը
5) Օդոակր ե) Արևմտյան Հռոմեական կայսրության անկումը

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | | | |

3. **Կատարել համապատասխանեցում**: *(0,5 **միավոր**)*

1) Օլիվեր Կրոմվել ա) ԱՄՆ-ի նախագահ
2) Յոզեֆ II բ) Պրուսիայի վարչապետ (կանցլեր)
3) Նապոլեոն I գ) Ավստրիայի կայսր
4) Ջորջ Վաշինգտոն դ) Անգլիայի լորդ-պրոտեկտոր
5) Օտտո Բիսմարկ ե) Ֆրանսիայի կայսր

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | | | |

4. **Տիրակալների գահակալման տարիները համապատասխանեցնել նրանց անունների հետ**:
*(0,5 **միավոր**)*

1) Հուստինիանոս I ա) 527-565 թթ.
2) Բաթու խան բ) 1461-1483 թթ.
3) Լյուդովիկոս XI գ) 1019-1054 թթ.
4) Յարոսլավ Իմաստուն դ) 1237-1241 թթ.

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | | |

***գ***. *(1 X 2 = 2 **միավոր**)*

1. **Տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ**: **Ընտրել երկու պատասխան**:
*(0,5 X 2 = 1 **միավոր**)*

ա) 1933 թ. Գերմանիան դարձավ Ազգերի լիգայի անդամ:
բ) 1941 թ. հունիսի 22-ին Գերմանիան պատերազմ հայտարարեց ԽՍՀՄ-ին:

գ) 1936 թ. Ֆրանսիայում տեղի ունեցած ընտրությունների արդյունքում իշխանության եկավ Ժողովրդական ճակատը՝ Է. Դալադիեի վարչապետությամբ:
դ) Երկրորդ աշխարհամարտն ավարտվեց 1945 թ. մայիսի 9-ին ֆաշիստական Գերմանիայի պարտությամբ:
ե) 1939 թ. սեպտեմբերի 3-ին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան պատերազմ հայտարարեցին Գերմանիային:

| | |
|---|---|
| | |

2. **Տրված բացատրություններից որո՞նք են սխալ**: **Ընտրել երկու պատասխան**:
*(0,5 X 2 = 1**միավոր**)*

ա) 1889 թ. Ճապոնիան դարձավ սահմանադրական միապետություն:
բ) 1923 թ. ֆրանս-բելգիական զորքերը ռազմակալեցին գերմանական Ռուր շրջանը:
գ) 1929 թ. Խորհրդային Ռուսաստանում սկսեց իրագործվել նէպ-ի քաղաքականությունը:
դ) 1923 թ. Մուստաֆա Քեմալն ընտրվեց Թուրքիայի Հանրապետության նախագահ:
ե) 1944 թ. հունվարի 6-ին Եվրոպայում բացվեց երկրորդ ճակատը:

| | |
|---|---|
| | |

## II. **ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱԶԱՏ ՇԱՐԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ** (5 **միավոր**)

1. **Ներկայացնել Հայկական տարածքների հարցը** 1921 **թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերում**: (2,5 **միավոր**)

2. **Ամբողջատիրական վարչակարգերը Եվրոպայում**: **Ներկայացնել ամբողջատիրության բովանդակությունը**, **ֆաշիստական վարչակարգերն Իտալիայում և Գերմանիայում**:
(2,5 **միավոր**)

**Է. Մինասյան**
**Պատմության հանձնաժողովի նախագահ**,
**պատմագիտության դոկտոր**, **պրոֆեսոր**

27.02.2017 թ.